

Ժողովրդական ընթերցանութ. համար:
ՀՅԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՆԴԵՐՍՈՆԻ № 2.

ԲԵՐԼԻՆԻ

ՊԱՇԱՐՈՒՄԸ



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԱԼՓՕՆՍ ԴՈԴԵԻՑ

ԹԻՖԼԻԶ

Երևանաբերդ պատճեն „ՀԵՐՄԱՆԻ“ Ընկ. Մազար. փող., 15.
1905.

Ժողովրդական ընթերցանութեան համար:
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՆԴԵՔՍՈՒԻ № 2.

ԲԵՐԼԻՆԻ

ՊԱՇԱՐՈՒՄԸ



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԱԼԳՈՆՍ ԴՈԳԵՒՑ

ԹԻՖԼԻԶ

Էլեմենտար ազգական „ՀԵՐՄԱՆ“ լին. Մադր. Փող., 5.
1905. (126)

Дозволено цензурою. Тифлисъ, 8 августа 1905 г.

383

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՆԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՆԴԱՐԱՆ

Բժիշկ Վ.... ի հետ միասին Ելիսեան
դաշտերով անցնելիս, մեծ ուշադրութեամբ
զննում էինք ոռոմքերով ծակոտած պատերը,
գնդակներով տեղերից շարժած սալայատա-
կի քարերը, և կարծես թէ պաշարման այս
համբ վկաներից էինք ուզում իմանալ Պարի-
զի տիսուր պատմութիւնը: «Աստղեր» կո-
չուած կամարին գեռ չը հասած, բժիշկը կանդ
առաւ և ցոյց տալով հարեան մեծ տներից
մէկը, ասաց ինձ.

— Տեսնում էք վերևում պատշգամբի վրա
այն չորս փակ լուսամուտները: Անցեալ տա-
րուայ օգոստոսի սկզբներում, օգոստոսի, որ
յայտնի է զանազան փոթորիկներով և դըժ-
բաղդութիւններով, ինձ հրաւիրեցին այնտեղ
մի կաթուածահար հիւանդի մօտ: Հիւանդը
առաջին կայսրութեան հեծելազօր գնդապետ
ժողվ էր: Իբրև ազգասէր, նրա ուշըն ու
միտքը Ֆրանսիայի մշտական փառքն էր, և
երբ որ սկսուեցաւ պատերազմը, նա տեղա-

փոխուեց Ելիսեան դաշտերը, ահա այս պատշշամբ քամբով քնակարանը... և ի՞նչ էք կարծում, ի՞նչու համար. Նրա համար, որ ականատես լինի մեր զօրքերի փառաւոր վերադարձին... Խեղճ ծերունի: Լսելով Վիստանբուրգի պարագութիւնը, նա ուշաթափ վայր ընկաւ: Ես հանդիպեցի այդ ծեր հեծելազօրին դորզի վրա փոռուած: Նրա երեսը կարծրած էր և անշարժ, կարծես մէկը խփած լինէր նրա գըլխին: Պառկած նա շատ մեծ էր թւում. երեկ բարձրահասակ էր: Զնայելով իր ութսուն տարեկան հասակին, ըստ երևոյթին, ծերունին կարծես վաթսուն տարեկանից աւելի չը մինէր. նա գեղեցիկ էր, ունէր սպիտակ ատամներ և գեղեցիկ սպիտակ մազեր: Նրա մոտ չոքած էր նրա փոքր թոռը և աղի արտասուք էր թափում: Թոռը շատ նման էր իր պապին: Նրանց միասին տեսնելիս, կարելի էր ասել, թէ դրանք երկու յունական գեղեցիկ մեղադներ էին միենոյն կաղապարում ձուլած, բայց թէ մէկը աւելի հին էր, փչացած և խաղիզած եղբներով, իսկ միւսը փայլուն էր, կարծես նոր էր ձուլուած:

Երեխայի վիշտը սիրտս շարժեց: Նրա

հայրը, որն սպայ էր, գտնուում էր Մակ-Մագօնի գլխաւոր բանակում: Ծերի զրութիւնը ահ էր զցում երեխայի սիրտը. ես թէպէտ աշխատում էի նրան հանգստացնել, բայց ինքը յոյս չ'ունէի հիւանդի առողջանալուն. ծերունու կաթուածը այնպիսի կաթուածներից էր, որից գժուաք է ազատուել ութսուն տարեկան հասակում: Եւ յիբաւի, երեք օրուայ ընթացքում հիւանդը գտնուում էր միենոյն սննջարժ և անզգայ զրութեան մէջ: Ահա այդ ժամանակ Պարիզում ստացուեցաւ Ռէյխսհօֆֆէնի մասին լուրը: Տարօրինակ բան:

Մինչեւ երեկոյ մենք համոզուած էինք, որ յաղթութիւնը մեր կողմն է, հաւատացած էինք, որ քսան հաղար պրուսացի սպանուած են և թագաժառանգը գերի է վերցրած: Չը գիտեմ թէ ինչպէս այս աղջային ուրախալի զգացման արձագանքը հասաւ մեր խուլ, համը և կաթուածահար հիւանդին. հէնց այդ երեկոյեան նա բոլորովին փոխուեց և ուրիշ մարդ գարձաւ: Աչքերը պարզուեցան, լեզուն բացուեց: Մինչեւ անդամնա այնքան ոյժ ստացաւ, որ կարողացաւ ժպտալով և կակազերով երկու անդամ արտասամնել.

«Յաղ-թու-թիւն»:

—Այս, գնդապետ, ասացի ես նրան, մեծ յաղթութիւն...:

Եւ քանի որ ես պատմում էի նրան Մակ-Մագօնի յաղթութեան մանրամասնութիւն-մերը, նրա երեսը պարզում էր: Երբ ես դուրս էի գալիս, դռան մօտ պատահեցի գու-նատ և շփոթուած աղջկանը: Նա լալիս էր:

Զէ որ հիւանդն ազատուած է, ասացի ես նրան, սեղմելով ձեռքը:

Խեղճ աղջիկը հազիւ կարողացաւ ինձ պատասխանել:

—Հէսց այդ ըոսկէին յայտնում էին Ռէյխս-հօֆֆէնի կոուի ճիշտ լուրը, այն է, որ Մակ-Մագօնի զօրքը ջնջուել է, իսկ ինքը փախել: Մենք երկիւղով նայեցինք միմեանց երեսին: Նա յուսահատում էր, մտածելով իր հօր մասին, իսկ ես դողում էի խեղճ ծերունու վրա մտածելիս: 'Իհարկէ, նա չէ կարող տա-նել այս նոր հարուածը...: Ի՞նչ ասել: Թող-նել արդեօք նրան իր ուրախ և խաբուած դրութեան մէջ, որով միայն կարելի կ'լինի պահպանել նրա առողջութիւնը, բայց այն ժամանակ պէտք էր սուտ խօսել...:

—Ի՞նչ արած, ես կը խաբեմ, պատաս-խանեց աղջիկը և շուտ սրբելով արտասուրքը, ուրախ դէմքով մտաւ պապի սենեակը:

Նա յանձն առաւ շատ ծանր խնդիր, — առաջի օրերը կարելի էր մի կերպ խաբել. խեղճ հիւանդը տկար էր և թոյլ էր տալիս իրան խաբել ինչպէս մի երեխայի, բայց առող-ջութեան հետ վերագառնում էր և առողջ բանականութիւնը. հարկաւոր էր ճիշտ յայ-տնել ծերին զօրքի շարժման մասին և հա-դորդել բոլոր պատերազմական նորութիւն-ները: Յաւալի դրութիւն: Աղջիկն ստիպուած էր նստել օր ու գիշեր Գերմանիայի քար-տէզի մօտ, կացնել փոքրիկ գրօշակներ և հնարել փայլուն յաղթութիւններ: «Բաղէնը, ասում էր նա պապին, որը լարած ուշա-դրութեամբ լսում էր նրան, յաղթութիւն գոր-ծեց Բերլինի մօտ, Ֆրուասսարը Բաւարիա-յում, իսկ Մակ-Մագօնը Բալթիկ ծովի վրա»: Աղջիկը միշտ խորհուրդ էր հարցնում ինձա-նից և ես օգնում էի ինչքան կարող էի: Բայց ամենից շատ մեզ իհարկէ ինքը պապն էր օգնում. քանի անդամ կայսրութեան ժամա-նակ յաղթել է նա գերմանացիներին. նա նա-

խազուշակում էր ամեն մի շաբժումը:

«Այժմ, ասում էր նա մեղ, նրանք կը գնան այսպէս... ահա թէ ինչ կանեն»... և նրա գուշակումները միշտ կատարւում էին, որով ծերունին շատ հպարտանում էր: Բայց չը նայելով այն արագութեանը, որով մենք քաղաքներ էինք վերցնում, յաղթութիւններ էինք դործում, այնուամենայնիւ այս նրա համար բաւական չէր: Ծերն անկուշա էր...: Ամեն օր, գալով նրա մօտ, ես իմանում էի մեր զօրքերի նոր յաղթութեան լուրը:

—Պ. բժիշկ, տիրած ասում էր ինձ աղջիկը պատահելիս, մենք գրաւեցինք Մայն-ը, իսկ դռան յետևից լաւում էր ծերի ուրախ ձայնը.

—Դործը առաջ է գնում: Ութ' օրից յետոյ մենք կը լինենք թերլինում:

Այն ինչ իսկապէս պրուսացիներին Պարեզ համելու համար մնում էր ութ' օրուայ ճանապարհ...: Մենք մտածում էինք, արդեօք լաւ չէր լինի տեղափոխել ծերունուն գաւառներից մէկը, բայց Պարիզից դուրս լինելով, անշուշտ կը հասկանար ֆրանսիայի իսկական դրութիւնը, իսկ թոյլ տալ նրան յան-

կարծ իմանալ բանի էութիւնը՝ դժուար էր, քանի որ ես նրան անպատրաստ էի համարում և այդ պատճառով մենք վճռեցինք մնալ:

Պաշարման առաջին օրը, ինչպէս մտաբերութ եմ, գնացի նրա մօտ սաստիկ յուղուած: Ես տանցւում էի, ինչպէս և ամեն ֆըանսիացի, տեսնելով քաղաքի փակած դըռները. ես գիտեի, որ կուռում են քաղաքի պատերի տակ, որ այդ պատերն են մեր սահմանները:

Հիւանդն ուրախ նստած էր մահճականի վրա:

—Միթէ ձեզ յայտնի է, գնդապետ:

—Այն, բժիշկ, ընդհատեց ինձ թոռը...: Դա երեխի նորութիւն է... թերլինի պաշարուն սկսուեց:

Աղջիկն ասում էր այդ խօսքերը հանգիստ, հանգարստ, առանց ընդհատելու իր գործը:

Իհարկէ ծերունին չէր կարող հասկանալ, թէ Պարիզն է պաշարւում: Ամրոցի թնդանօթների ձայնը չէր հասնում նրա ականջին: Նա չէր տեսնում անբաղդ, անհանգիստ և մուայլ Պարիզը: Նա իր անկողնուց կարողանում էր տեսնել միայն յաղթութեան կամա-

բի մի մասը։ Նրա սենեակը զարդարած էր առաջին կայսրութեան ժամանակուայ զանազան իրերով և առարկաներով, որոնք վառ էին պահում նրա երեակայութիւնը և աւելի էին նապաստում, քան մեր բոլոր տշխատանքները, որ քաջ գնդապետը միամիտ հաւատաբար Բերլինի պաշարմանը։

Այդ օրուանից մեր պատերազմական գործումէութիւնը շատ թեթևացաւ։ Բերլինի պաշարումը դարձաւ ժամանակի հարց։ Երբ որ ծերը շատ տիրում էր, նրան կարդում էին որդու նամակը, իհարկէ նասրած, որովհետև առաջին՝ ոչ մի լուր չէր հասում Պարիզ և երկրորդ՝ Սեղանից յետոյ Մակ-Մազոնի թիկնապահը ուղարկուած էր Գերմանիայի ամբողներից մէկը։ Կարող էր երեակայել իսեղճ աղջկայ յուսահատութիւնը։ Չստանալով իր հօրից ոչ մի աեղեկութիւն և կարծելով որ նա զերութեան մէջ զրկուած է ամենաանհրաժեշտ բաներից, կարելի է հիւանդ էլ է, ստիպուած էր նասրել ուրախ և կարծ նամակներ, որը կարող է գրել սպան պատերազմի ժամանակ միշտ առաջ գնալով նուաճած երկրում։ Երբեմն հայրը տկարանում էր և ամբողջ շաբաթներով

հօրից նամակ չէր ստացւում։ Խեղճ ծերը անհանգիստ լինելով գիշերները չէր կարողանում քնել։ Ալդպիսի դէպքերում իսկոյն նամակ էր գալիս Գերմանիայից և աղջիկն ուրախութեամբ կարդում էր հիւանդին, հազիւ կարողանալով զսպել արտասուքը։ Գնդապետը յարգանքով և ժպտալով լսում էր նամակի բովանդակութիւնը, գովում էր, երբեմն էլ քննում և բացատրում էր մեզ մութ կէտերը։ Հետաքրիր էին նրա պատասխանները որդուն։

—Երբէք չըմոռանաս, որ դու Փրանսիացի ես, գրում էր ծերը նրան, եղիր ներողասիտ դէպի թշուառ զերմանացիները, մի ծանրաբեռնիր նրանց մեծ հարկերով……

Դրանից յետոյ գալիս էր մի ամբողջ շարք խորհուրդներ սեփականութեան, կանանց յարգելու մասին և այն։ Այսպէս ծերը յիշեցնում էր որդուն յաղթողի պարտականութիւնները դէպի դժբաղդ յաղթուածները. յաղթութեան պայմաններում նա շատ պահանջող չէր։

—Պատերազմական ծախսերի հատուցումն և ուրիշ ոչինչ։ Ի՞նչ հարկաւոր է գաւառներ խլել։ Միթէ կարելի է Գերմանիան Փրանսիա դարձնել։

Նա այս բոլորը թելադրում էր այնպիսի վճռողական ձայնով, նրա խօսքերը արտայայտում էին այնպիսի անկեղծութիւն և հայրենասիրական զգացմունք, որ չէր կարելի լսել նրան առանց յուզուելու:

Իսկ պաշարումն առաջ էր դնում, պաշարումը նշ թէ Բերլինի, այլ Պարիզի... Յըրտի, ուժակոծութեան, հիւանդութեան և քաղցի օրեր էին: Բայց մեր հոգաը, աշխատանքը, մնդադար ցոյց տուած փայփայանքը ոչ մի բոսէ չէին թոյլ տալիս խաւարելու ծերունու փայլուն յոյսերը: Մինչև վերջը ես իարողանում էի գտնել նրա համար սպիտակ հաց և թարմ միս: Իհարկէ, միայն նրան էր բաւականանում: Ուրախ և զուարթնատած էր ծերունին իր անկողնում, անձեռոցիկը կուրծքին կապած, իսկ նրա մօտ՝ հոգմերից և զրկանքներից գունատուած թոռը, նա ուտեցնում էր պապին համեղ կերակուրներ, որ գժուար էր գտնել պաշարման ժամանակ: Նախաճաշից յետոյ, ծեր հեծելազօրը, կերակրով զուարթացած, տաք սենեակի մէջ փակուած, մտաբերում էր իր հիւսիսային արշաւանքները և շատ անգամ պատմում էր Ռուսաստանից հե-

ռանալը, երբ նրանք ստիպուած էին կերակրուել ձիու մսով և սառած պաքսիմատներով:
— Հասկանում ես, որդեակ, մենք ձիու միս էինք ուտում:

Կարծեմ որ աղջիկը լաւ էր հասկանում. արդէն երկու ամիս էր, որ նա բացի ձիու մսից ուրիշ ոչինչ չէր կերել...: Մինչդեռ ծերը փոքր առ փոքր առողջանում էր, մեր գրութիւնն օր ըստ օրէ աւելի գժուարանում էր: Սկզբում ծերի տկարութիւնը հեշտացնում էր մեր դերը, բայց քանի որ նա առողջանում էր, մեր գրութիւնն աւելի և աւելի գժուարանում էր: Արդէն երեք թէ չորս անգամ սթափուել էր նա Մալիօ դուան մօտ արձակուած թնդանօթների ձայնից: Մենք ստիպուած էինք հնարել դարձեալ մէկ, բայց վերջին յաղթութիւն, որը իբր թէ գործել էր Բազէնը Բերլինի մօտ և այդ պատճառով թնդանօթներ էին արձակում: Մէկ անգամ մենք մօտեցրինք ծերունու մահճակալը լուսամուտին, սա հինգշաբթի օր էր, Բուցինվակի տօնի օրը, նա իսկոյն տեսաւ աղբային հեծելազօրքը, որ հաւաքուել էր «Մեծ Զօրք» կոչուած տափարակում:

—Այս ի՞նչ զօրք է, հարցը բարի ծեռունին, վատ օգնութիւն է, վատ օգնութիւն:

Նա էլ ոչինչ չ'աւելացրեց: Մենք տեսանք, որ այդ օրից սկսած աւելի պէտք է զգոյշ լինել, բայց տարաբաղդաբար չ'կարողացանք այդ անել:

Պրուսացիների Պարիզ մտնելուց մի օր առաջ, անհանգիստ երեխան հանդիպեց ինձ հետեւեալ խօսքերով.

—Վաղը նրանք ներս են մտնելու:
Երեկ ծերի սենեակը բաց էր, որովհետև երբ ես մտայ, իսկոյն նկատեցի, որ նրա դէմքը մի տեսակ արտայայտութիւն է ստացել: Կարելի է նա լսեց մեր խօսակցութիւնը: Բայց մենք խօսում էինք պըուսացիների մասին և ոչ ֆրանսիացիների, որոնց Պարիզ մտնելուն նա անհամբեր սպասում էր: Ծերունին երեակայում էր Մակ-Մազոնին փողոցներով անցնելիս, ծաղիկների մէջ կոռած, չորս կողմը փողը հնչելիս, իսկ նրա կողքին իր որդուն և վերջապէս իրան, պատրշգամբի վրա, իր համազգեստը հագին. նա երեակայում էր, թէ ինչպէս ինքը շնորհա-

որում է գնակներով ծակոտած և վառօդից սևացած արծուանիշ դրօշակները....

Խեղճ ծեր ժող: Նա կարծում էր թէ մենք ուղում էինք խանգարել նրան ներկայ լինելու զօրքի Պարիզ մտնելուն. որպէս զի հեռու մնայ սաստիկ յուզմունքից, հէնց այդ պատճառով նա իր մտադրութիւնը ծածուկ էր պահում: Միւս առաւօտ, երբ պըուսացիների զօրաբաժինը գնում էր Մալիօ դըռներից գէպի Տիւկլընի, վերեկց կամաց բացուեց լուսամուտը և գնդապետը դուրս եկաւ պատշգամբը: Նա զլիսին ծածկած ունէր սաղաւարտ, հագած էր ծանր զրահ և Միլօի ժամանակուայ հեծելազօրի հին, բայց փառաւոր համազգեստ: Մինչև այժմ չեմ կարողանում հասկանալ, թէ այն ի՞նչ կամք էր, այն ի՞նչ կեանքի հոսանք էր, որ նրան ոտքի կանգնեցրեց: Անկասկած պատշգամբի վրա կանգնած ծերունին զարմացած էր մնացել ժողովրդի բացակայութեան, Պարիզում տիրող լուութեան և փակ պատուհանների վրա: Պարիզը մի սարսափելի հիւանդանոցի էր չմանում. ամեն տեղ կախած էին դրօշակներ, բայց ի՞նչ տեսակ. սպիտակ, վրան կար-

միր խաչ, խակ զինուորների առաջը ոչ ոք
չեր գնում:

Մի բողէ նա կարող էր կասկածել, ար-
դեօք ինքը չի սխալում:

Բայց ոչ: Այստեղ՝ յաղթութեան կամարի
յետեկց մի անորոշ ձայն էր լսում. հաւա-
խօսին արդէն հեռուում երևաց մի ինչ որ սև
շարժուող գիծ: Յետոյ փոքր առ փոքր փայ-
լեցին սաղաւարտների ծայրերը, թնդացին
իեննական փոքրիկ թմբուկները և «Աստղեր»
կամարի տակից՝ ծանր քայլերի և թրերի ձայ-
նի հետ, լսելի եղաւ Շուբերտի յաղթական
մարշը:

Այն ժամանակ մեռելային լոռութեան մէջ
լսելի եղաւ մի ձայն. «'ի զէն, 'ի զէն,
պրուսացիները»...: Եւ առաջին կարգի չորս
հեծելազօրը տեսան, թէ ինչպէս վերեռում՝
պատշգամբի վրա ծերը տատանուեց և վայր
ընկաւ: Այս անգամ նա մեռած էր:



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. Ա. Խ.

1.	Խօլեր	5
2.	Խրիմեան Հայրիկ	20
3.	Պանդուխտ պատանի (սպասուած)	70
4.	Պ. Դուրեանի բանաստեղծութիւնները	20
5.	Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, բայց զատաստանը շուտ չի անում. Լ. Տօլստոյի	5
6.	Երեք մահ Լ. Տօլստոյի	5
7.	Ճշմարտութիւն	5
8.	Շամախու աղէտը	20
9.	Պետ. Դուրեանի բան ստ. և տպագր.	20
10.	Պատկերներ Բաֆֆու կեանքից	40
11.	Երգիծաբանակ. հատուածներ Պարոնեանի	5
12.	Որտեղ կայ սէր, այնտեղ է և Աստուած Լ. Տօլստոյի	5
13.	Եղբայրը եղբօրը դէմ Վ. Հիւգօի	10
14.	Հարսնացու և փեսացու	5
15.	Ուրիշի գերեզմանի վրայ առանց ար- տասուըի են լաց լինում	10
16.	Ինչ է ազգութիւնը	20
17.	Բերլինի Պաշարումը. և տպագր.	5
	Որոնք կը պահանջեն մէկ-մէկ օրինակ ճա- նապարհածախսը ուղարկողի վրայ. իսկ գումարով ցանկացողներին 20 գեղջ ծանապարհածախսով.					

Մեր հասցեն.

Тифлисъ, улица Броссе, № 5. А. А. Ованесянцъ.

Телеф. № 1033.

Գիւն է 5 ԿՈՊ.